ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 2

08.01.2019 թ. ք. Երևան

«ՈՍԿԵ ԳԱԳԱԹ» ՍՊԸ-ն՝ հետագայում «Մատակարար», ի դեմս տնօրեն Հ Թադևոսյանի մի կողմից, և «ԱՆԱԼԻՏԻԿ» ՓԲԸ-ն՝ հետագայում «Գնորդ», ի դեմս տնօրեն Ս. Սարգսյանի, մյուս կողմից, ղեկավարվելով իրենց կանոնադրություններով և ՀՀ գործող օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ և ԱՐԺԵՔԸ

1.1 «Մատակարարը» վաճառվում է, իսկ «Գնորդը» գնում է իր արտադրատնտեսական կարիքների համար անհրաժեշտ ապրանքներ:

1.2 Ամսեկան գնումների ծավալը կազմում է 40.000 դրամ կամ սույն պայմանագրով նախատեսված ժամկետում՝ 480.000 դրամ:

2. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ և ԱՊՐԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

2.1 «Գնորդը» ապրանքի գնման համար վճարումները կատարում է՝ ելնելով իր հնարավորություններից միանվագ ողջ ժամկետի համար կամ յուրաքանչյուր ամիս:

2.2 «Գնորդը» ապրանքը ստանում է վճարելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ըստ ներկայացված հաշիվ-ապրանքագրի:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 «Մատակարարը» պարտավոր է մատակարարել ապրանքը նշված ժամկետում:

3.2 «Գնորդը» պարտավոր է վճարել ընդունված ապրանքի արժեքը և ընդունել ապրանքը:

3.3 «Գնորդը» իրավունք ունի՝

- Ստանալ ապրանքը պայմանագրին համապատասխան:
- Ստանալ «Մատակարարի» կողմից իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով պատճառած վնասը և տուգանքը:

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1 Պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում մեղավոր կողմը պարտավոր է մյուս կողմին փոխհատուցել վնասը, քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան:
- 4.2 Անորակ և ոչ համալիր ապրանք մատակարարելու դեպքում «Մատակարարի» պարտականությունները համարվում են չկատարված, իսկ ապրանքը՝ չմատակարարված:
- 4.3 Յուրաքանչյուր կողմը կարող է պահանջել լուծարել պայմանագիրը և հատուցել վնասները, եթե մյուս կողմը չի կատարում պարտականությունները:
- 4.4 Կողմերը ազատվում են պարտականությունից, եթե պարտականությունների չկատարումը կապված է ֆորսմաժորային իրադարձությունների կամ կառավարական արգելքների հետ, որի մասին գրավոր հայտնում է մյուս կողմին:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 5.1 Պայմանագրի շուրջ առաջացած վեճերը կողմերը ձգտում են լուծել բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում, վեճերը քննարկվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:
- 5.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2019 թ. հունվարի 8-ից և գործում են մինչև 2019 դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

«Մատակարար»	«Գնորդ»
«ՈՍԿԵ ԳԱԳԱԹ» ՍՊԸ	«ԱՆԱԼԻՏԻԿ» ՓԲԸ
Ք. Երևան, Կոմիտասի 54/146	Ք. Երևան, Կոմիտասի 29
ՀՎՀՀ 01235765	ՀՎՀՀ 00000749
h/h 118001147867	h/h 247010000526
«Անելիք Բանկ» ՓԲԸ	ԱՇԻԲ
Տնօրեն՝ Հ. Թադևոսյան	Տնօրեն Ս. Սարգսյան